Հաշվետվություն

2022 թվականի մայիսի 15-18-ը Բոսնիա և Հերցեգովինայի մայրաքաղաք Սարաևո կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան
   Սարգիս Արամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար
   Անշարժ գույքի գրանցման միասնական ստարաբաժանման ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բոսնիա և Հերցեգովինա, Սարաևո, 2022 թվականի մայիսի 15-ից 18-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովին

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում անցկացվեցին հետևյալ խորագրերով քննարկումներ.
   - Թվային Եվրոպա և բարձրարժեք տվյալների բազաներ,
   - Արհեստական բանականությանը վերաբերող հարցեր,
   - Կայուն զարգացման նպատակներ, տվյալների հասանելիություն, նորարարական կադաստր, «Կոպերնիկուս» նախաձեռնություն,
   - «Եվրոգեոգրաֆիքսի» ապագա ռազմավարական ուղղությունները,
   - «Եվրոգեոգրաֆիքսի» 2022 թվականի գործառնական ծրագրի, բյուջեի մասով քննարկումներ և հաստատում,
   - Կառավարման խորհրդի անդամների ընտրություն:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

«Եվրոգեոգրաֆիքս» կազմակերպության գլխավոր համաժողովի շրջանակներում հայկական կողմի նախաձեռնությամբ կայացան նաև երկկողմ մի շարք հանդիպումներ՝ Իսպանիայի Թագավորության, Շվեդիայի Թագավորության, Նիդերլանդների, Հունաստանի և Կիպրոսի պատվիրակությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև հետագա համագործակցության ներուժը և հնարավոր ուղղությունները:

Կայացան կլոր սեղանի ձևաչափով քննարկումներ՝ օրակարգով նախատեսված հարցերի վերաբերյալ:

Համաժողովի վերջին օրն անցկացված ընտրությունների արդյունքում ընտրվեցին կազմակերպության կառավարման խորհրդի 3 նոր անդամներ, հաստատվեց տարեկան բյուջեն և տարեկան գործողությունների ծրագիրը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում հայկական կողմը փոխգործակցության մի շարք պայմանավորվածություններ ձեռք բերեց գործընկեր երկրների հետ: Մասնավորապես՝ Իսպանիայի պատվիրակության ներկայացուցչի հետ քննարկվեց առաջիկայում հայկական պատվիրակության՝ Իսպանիա կատարելիք այցի մանրամասները, դրա ընթացքում Փոխըմբռնման հուշագրի ստորագրման հնարավորությունը և հետագայում համագործակցության հնարավոր ուղղությունները:

Նիդերլանդների պատվիրակության հետ երկկողմ հանդիպման ընթացքում կողմերը կարևորեցին ներկայումս Հայաստանում իրականացվող Արխիվների թվայնացման ծրագիրը, ընդգծվեց վերջինիս կարևոր դերը Կադաստրի ոլորտում բարեփոխումների իրականացման համատեքստում, ինչպես նաև քննարկվեց համատեղ նոր ծրագրերի իրագործման հնարավորությունները:

Շվեդիայի Թագավորության Լանտմատերիատ կազմակերպության ներկայացուցչի հետ երկկողմ հանդիպման ընթացքում քննարկվել է Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային բարեփոխումների համագործակցային ռազմավարության շրջանակներում շվեդական կողմի հետ համատեղ երկարաժամկետ ծրագրի իրականացմանն ուղղված հետագա քայլերը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝**

եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց շարունակել համագործակցությունը համատեղ ծրագրերի, առաջարկությունների շրջանակներում, մշակել ռազմավարական նոր ուղիներ, աշխատել հավաստի տվյալների տրամադրման, շահագրգիռ կողմերի միջև առավել արդյունավետ հաղորդակցության ապահովման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Սուրեն Թովմասյան 23.05.2022 թ.

Սարգիս Արամյան